Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-04-2021 թ. որոշմամբ
««ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Արտեմ Միկոյան փող., 35
1.3 Պետական գրանցման համարը		222.160.130501
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-08-03
1.5 ՀՎՀՀ-ն		00878453
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)95993553
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://fund.shirakatsy.am
1.8 Էլեկտրոնային փոստը		fund@shirakatsy.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	2	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆինանսական աջակցություն	6096605
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ֆինանսական աջակցություն	17913231
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	500000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		

10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		

11. Իրականացված ծրագրերը՝	
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
Թենիսի կորտի հարդարման աշխատանքներ	2335166
Հանրակացարանի մասնակի վերանորոգում	12802838
Գրադարանի և քիմիայի լաբորատորիայի վերազինում	133111
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	19431177
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	15271115

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 7 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն AJEMIAN ARPI 7604720455

Digitally signed by AJEMIAN ARPI 7604720455
DN: c=AM, sn=•••••••, givenName=••••, serialNumber=254a21b7e6f2, cn=AJEMIAN ARPI 7604720455
Date: 2021.06.16 12:56:19 +04'00'

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության

ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն

ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Աուդիտի ղեկավար
Արմեն Ազիզյան

31 մարտի 2021թ
ք. Երևան

«Շիրակացու ճեմարանի զարգացման» Հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	333	425
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**333**	**425**
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		12	5
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	5,784	2,259
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**5,796**	**2,264**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**6,129**	**2,689**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		5,508	1,015
Ընդամենը զուտ ակտիվներ		**5,508**	**1,015**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	6	333	425
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**333**	**425**
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	7	-	1,000
Կրեդիտորական և այլ պարտավորություններ	8	288	244
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		-	5
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**288**	**1,249**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**6,129**	**2,689**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. մարտի 31-ին:

Տնօրեն

Արփի Աջեմյան

Ֆինանսական հաշվապահության
պատասխանատու
Քրիստինա Սահակյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	Ծնթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրաբերությունից եկամուտներ	9	24,010	18,502
Շնորհներից եկամուտներ	6	92	51
Վարչական ծախսեր	10	(4,267)	(2,880)
Այլ գործառնական ծախսեր	11	(15,413)	(15,631)
Այլ գործառնական եկամուտներ		-	92
Գործառնական արդյունք		**4,422**	**134**
Զուտ ֆինանսական եկամուտ		47	27
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ / (վնաս)	12	33	(95)
Շահույթ մինչև հարկումը		**4,502**	**66**
Շահութահարկի գծով ծախս		(9)	(5)
Տարվա շահույթ		**4,493**	**61**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**4,493**	**61**

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**954**	**954**
Տարվա շահույթ	61	61
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	61	61
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,015**	**1,015**
Տարվա շահույթ	4,493	4,493
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	4,493	4,493
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,508**	**5,508**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված նվիրաբերություններ	23,910	18,735
Այլ մուտքեր	47	27
Վճարումներ մատակարարներին	(15,940)	(14,947)
Վճարումներ անձնակազմին և նրանց անունից՝ կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց	(3,428)	(4,784)
Շահութահարկի վճարում	(14)	-
Այլ գործառնական ելքեր	(83)	(104)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**4,492**	**(1,073)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումների գծով ելքեր	-	(233)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**-**	**(233)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառության վերադարձից մուտքեր	10,000	3,800
Փոխառության տրամադրումից ելքեր	(10,000)	(3,800)
Փոխառության մարումից ելքեր	(1,000)	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(1,000)**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	**3,492**	**(1,306)**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,259	3,660
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	33	(95)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**5,784**	**2,259**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 27-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 16.06.2021 12:48